



Ա Մ Ս Ս Գ Ի Բ

1874-7

ԽՈՎԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Թիկ 4.

ՅՈՒՆԻ ԱՐ 31
1874

Ա.Զ.Դ.Ա.Յ.Ի. ԲՈ.Ն.Յ.Ս.Ի.Ր.Ը.Կ.Ա.Ն ԵՒ ԳՐԱԳԻՏԱԿԱ.Ն

Ն Ա Ր Տ Ա Ր Ի

ՆԱՐԱՄԱՆ տարւոյն հետ ամեն ոք պարոք կըզգայ սակաւ ինչ կանգ առնուլ և յետադարձ ակնարկ մի ձր գել անցկեցն վերայ և նորա մէջ կատ որուած նշանաւոր իրողութիւններն դիտել, բննել և բաղդատել, ներկայ ին եւ ապագային համար սկսակար հետեւութիւններ հանել. Այս յետադարձ ակնարկը, այս քննութիւնը կարեւոր և օգտակար է ինչպէս թագակիր և գահակալ իշխաններու համար, նյուպէս անշուք խրճիթի մէջ գրգլեակներով իւր մերկութիւնը ծածկող աղքատին համար. ինչպէս հօրմը, նյուպէս մօր մը համար. մէկ խօսքով ինչպէս գուաղանին յեցած եւ

գերեզմանին դուռն հասած ծերունայն, նյուպէս բայցավառ ոգւալ ապագային յոցերալ մնանազ երիտասարդի համար, վասն զի ժամանակը, որ յիշատուծոյ մարդկանց տրուած գերադայն պարգև մի է, մասնաւորի մը ըլպատկանիր, այլ առ հասարակ ամեն մարդոյ: Ժամանակը կենաց պահպանութեան համար տրուած է եւ արդէն կենաց բռն էռեթիւնը եւ մարդկանց ճշմարիտ բարութիւնը գործելուն մէջ է, որ ժամանակով և ժամանակի մէջ կը կատարուի. և ով է կեանքը ըլ սիրող, քաղցր է կեանքը ամենուն համար. թէ գահոյից վերայ բազմող վեհապետին եւ թէ անցարկ աղքատին

համար, թէ աղստին և թէ շինակառ նին համար, թէ ավելոջ և թէ ծառացին համար, մէկ խօսքով թէ արինոջ և թէ աղախնոյն համար. հետեւաբար ինչպէս ասացինք, ամեն ոք, ամեն հասակի և վիճակի տէր մարդիկ առ վայր մի կանգ առնելով կամ խորին հսուաչանօք ժամանակի գործած ախուր աւերանաց վերայ ցուրտ եւ տիրագին նայուածք մի կը ձգեն, կամ զուարթ և ժամանակ գիմօք ժամանակի կերաած հրաշալիքներն դիտելով կը սրանքնան և կը հիանան. ուստի եւ կը փառաւորեն ժամանակի Արարից, որ տուած է ժամանակը մարդկանց իբրեւ անաչառ և անկաղմնակալ դատաւոր նոցա գործունէութիւնը քաջալերի լու և վարձատրելու. հեղգութիւնը, ծուլութիւնը և թմրութիւնը նը շուակիլու և պատժելու. զայս ակներեւ կը տեսնեմք, երբ անցելցն փոշին կը մաղիմք. երբ անցեալ դարերը ՚ի վրայութիւն կը կոչեմք և երբ աղդաց անցեալ կենաց պատմութիւնը կը թմրդ թատեմք. վասն զի հօն պիտի տեսնեմք, որ ժամանակը ուր թմրութիւն եւ հեղդութիւն կը ավիենին, քոնդած, աւերած, կործանած եւ ընթած է շատ աթոռներ, տէրութիւններ և աղդեր. սորա հակառակ այն տեղերը, ուր աշխատութիւնը իբրեւ կենաց միակ սընունդ ընդունուած է, այն տեղերը ժամանակը շինած, կանգնած և վերածնած է շատ աթոռներ, տէրութիւններ և աղդեր. սորա հակառակ այն տեղերը, ուր աշխատութիւնը իբրեւ կենաց միակ սընունդ ընդունուած է, այն տեղերը ժամանակը շինած, կանգնած և վերածնած է շատ աթոռներ, աղդերը և սերունդներ. Երբ անցեալ դարերու տարեգրութիւններն բանամք մէր աչքին առ չեւ, պիտի տեսնեմք որ ժամանակն իբրեւ անաչառ դատաւոր իւր մէկ ձեռքով մահ, ապականութիւն եւ աւերում սփռած է հօն, արկէ աշխատութիւնը վտարակոն եւ զած է. խոկ միւս ձեռքով կեանք, չենութիւն եւ վերածնունդ այն տեղ

ուրկէ հեղգութիւնը իբրեւ ցեց կենաց հաղածուած է: Երբ անցած աղդերն իրենց գերեզմանէն կոչեմք, պիտի վըկայեն, թէ ժամանակը իբրեւ ծնադ յառաջադիմութեածք միշտ և անլոնդհաստ կը դիմէ գէսպ ՚ի արշալցու, գէպ ՚ի նորոգութիւն և կեանք. իրեն համընթաց եղող աղդերն իւր սրբնթաց կառքին մէջ առնելով կը տանի գէպ ՚ի լցու և կեանք. խոկ իրեն հետ ընթացողներն կը թողու խաւարի մէջ, կը մատնէ թշուառութեան ձեռքը, կը ծերացնէ աղքատութեամբ և ապա գերեզման կ՚իջեցնէ: Այս ամենը ակն յայտնի ճշմարտութիւններ են. վասն զի ուր են հնութեան ամենէն պանծալի աղդ գերն. ուր են նախկին դարերու աշխարհասասան և աշխարհակալ տէրութիւններն. ուր է Հռովմէական ընդարձակ պետութիւնը, ուր են Ասորեստաննեաց, Կարկեդոնացւոց եւ այլ աղդաց թագաւորութիւններն . . . սորքա ամենքը անաշխատութեան արդիւնք եղող բազմատեսակ ներքին եւ արտաքին եղջմամբ անկան ժամանակի հարուածոց տակ, մանրեցան, փոշեացան և անցայտ ցրուեցան իրենց բեկորներն. սոքա ամենքը իրենց զեղծ կեանքով, բարբուլ և սովորութեամբ ժամանակի աւերիչ ձեռաց հանդիպեան, աղդաց ապականութիւնը և այլ զեղծմաւնք անաշխատութեան հետեւանք են, ըսկայ կեանք և ոչ կենաց տեւականութիւն և յաջորդութիւն առանց աշխատութեան. վասն զի բնութեան Արարից իբրեւ կենաց առ աջն անունդ տուած է մարդկանց աշխատութիւնը և ժամանակը:

Այս խորհրդածութեանց հետ բը նականաբար հարցում մի կը գայ մըսուքերնիւ. թէ արդեօք մէր Ազգին ժամանակին հետ յառաջ կը բալէ. ար-

զեօք դէս ՚ի լցու և նորոգութիւն կը գիմէ . թէ անարթնութեամբ ժամանակին յետ մնալով խաւարի և մժութեան մէջ կը խարիսխափի : Թէ և դարերը կանցնին , տարիներն կը սահին , օրերը արագ արագ կը վազեն և ժամերն ու վայրիեաններն միշտ կը փոփոխին , միշտ կը նորոգին . արդեօք մէր ազգային կեանքն եւս այս անընդհատ փոխիսութեան և նորոգութեան հազրդէ , թէ իսպառ անմասն կը մնայ միշտ նոյնութեան մէջ : Այս է մեր մինուուած խակ կէտը եւ ամենակարեւոր հարցը նոր տարւոյ առ թիւ եւ սիէտը է ամեն ազգային անհատի ուշքըն և մոտադրութիւնը գրաւէ :

Եթէ սոյն հարցման պատասխանը ուրիշներէն սպասեմք , լաւ գիտեմք , որ ոմանք ազգային ներկայ կեանքէն բոլորովին զզուած և ապագայէն ամենեւին անցյա պիտի պատասխանէն , թէ չը կայ մեր Ազգի համար փափոխութիւնն և նորոգութիւն . վասն զի ամեն տեղ տեսնուածներն ոչ այլ ինչ են , այլ ախաւը պատկերներ , յետագիմական երեւոյթներ և հակազգային դորձուածքներ . խակ ոմանք ընդհակառակին Ազգին յառաջադիմական փոքրիկ խըստումներէն յափշտակուած , յուսալիր ապագայի մը երազներով լցուած պիտի պատասխանէն , թէ մեր ազգի կեանքը վայրիեաններու փոփոխութեան , օրերու և տարիներու անընդհատ նորոգութիւն է . ա . բ . գ . ի սկզբնաւորութիւնը լւզուի ընդարձակ մշտկութիւն . ուստանց նախագիտելեաց աւանդութում եթէ անհամար ամենափոքրիկ շարժում մի հսկայաբայլ յառաջադիմութիւնն է . ա . բ . գ . ի սկզբնաւորութիւնը լւզուի ընդարձակ մշտկութիւն . ուստանց նախագիտելեաց աւանդութում եթէ անհամար ամենափոքրիկ շարժում մի հսկայաբայլ

անուն ունենալը . սահմանադրական ազգաց հաւասարիլ է : Եթէ այս երկու տեսակ պատասխաններն զատ զատ քննեմք , երկուան եւս մասամբ իրաւացի պիտի գտնեմք : Իրաւունքը ունին նորա , որք Ազգի ներկայ կեանքը անգոհացուցիչ կը գատեն . վասն զի եթէ ազգային ներկայ և անցեալ կեանքերն համեմատեմք իրարու հետ , աւելի կորուստ պիտի գտնեմք , քանի թէ գիւտ . աղքատառութիւն քան թէ ճուտութիւն . նուազութիւն ազգայնութեան ամենակերպ տարերաց քան թէ առաւելութիւն և բարգաւաճանք . իրաւունք ունին . վասն զի չունիմք այս աօր ոչ նախկին հարսատութիւնն , ճուիտութիւնն և զօրութիւնը , չունիմք ոչ Հայկազնց իշխանութիւնն , ոչ Արշակունեանց թագաւորութիւնն , ոչ Քաղաքառունի և Արքիմեն մեր արդի կեանքը հնոյն համեմատութեամբ նորութիւնն և առաւելութիւնն մի չունենալէն զատ մեծ կորուստ ունի : Թողումք այս նիւթական կորուստներն , նիւթական աղքատառութիւնը և ակարութիւնը , բարցական մեծ կորուստներ , բարցական մեծ աղքատառութեան և ակարութիւնն մէջ ընկած եմք : Ուր են չորրորդ և հինգերորդ գարու հայերն , ուր նոցաքրիստոնէական սիրով վուռուած ոգին , որով հայրենեաց և հայրենաւանդ օրինաց պաշտպանութեան համար մահ քան զիեանս ընտրեին . ուր են այն ժամանակի հոյ կանայք և և տիեզնայք , որք գիւցավնուհիք և առաքինութեան հարաներ էին , որոց միակ միսիթորութիւնն էր Ս . Գրոց ընկմերցուածներն և Ապղմասաց մրմունիներն , ուր է նախկին ընտանեկան անարատ կեանքը , որոց ծածկութիւն տակ և ամուսնական առագատարին մէջ կը թագաւորէին որբութիւն և ողջախահու-

թիւն . ուր են աւետարանական այն ըստիր մշակներն , որք աղէտներէ եւ տադնապներէ ուռանց յաւսահատելու՝ մի կողմէն կ'արտասուէին հայրենեաց թշուառութեան և ժողովրդեան ան հնարին աղէտից վերայ , միւս կողմէն արտասունքնին սրբելով ժողովրդեան բարյական ուժը զօրացնել կը ջանեյ ին . բրոտամքը և արտասուօք կը ցանեն մուսւոր զարգացման սերմերն . ուր են այն ըստիր և անձնադիր հովիւներն և հայրապեաներն , որք հայր էին հայրենեաց մէջ . իսկ պաշտպան հայք բենեաց՝ օտարաց առջեւ , որք քաջ համանալով աղդային միութեան խոր հուրդը և զօրութիւնը , աղտչանօք և արտասուօք կը յարդարէին ժողովուրդը ՚ի սէր և ՚ի միութիւն . վերջապէս ուր է այն ուսումնափրութիւնը , որով Հայաստանի քաջաշելիքը կարութանկ եւ տրամախոհ զաւակունքը անիմաց ծալ ու ցումաք կորելով կերթային ու մակը յԱթէնս , ամանք ՚ի Հռովմ , այլք յԱղէքսանդրիս , շատերն ՚ի Քիւզանգինն եւ ուրիշներն յԵղեսիա . ուր նոքա մրաջան մեղուաց նման հայրենեաց շնութեան , յառաջադիմութեան և լուսաւորութեան համար բարյաւ կամ մեզը և մամ կը պատրաստէին : Չը կամ այսօր անոնցմէ ոչ մին և ոչ միւսը , այլ փոխանակ նախկին թագաւորութեան և հարատութեանց առընդութիւնն եւ նիւթական ու բարյական աղքատութիւնն է . փոխանակ նախկին քաջութեան , վատութիւն . փոխանակ քրիստոնէական թագաւորութիւնն եւ կամ կրօնական առ կեղծ կրօնափրութեան , կրօնական ան տարբերութիւնն եւ կամ կրօնամղութիւն , փոխանակ նախկին առաքինի և գիւցապնուհի հայ կանանց և տիկնանց , անսպ սրբեցու , լիովի և նորափրութենէ գերեալ հայ կանացք և տիկնացք . փոխանակ աւետարանական ընտիր մշա-

կաց , անիրաւ մամնային , ագտէութեան , մարդահաճութեան և փառասիրութեան միակ զինաւորներ , փոխանակ անձնադիր հովուաց և հայրապեատաց , անձնասէր և օտարամոլ հովիւներ եւ հայրապեաներ . մէկ խօսքավ փոխանակ նախկին ուսումնափրութիւն , ժողովրդեան ընդհանուր ագիտութիւն . ուրիմ գարձեալ կ'ասեմք , իրաւունք ունին նոքա , որք աղդին կեանքը եւ միջակը կ'ողքան . վասն զի տակաւին կը քնանամք , տակաւին անցյա երակ ներու մէջ կ'ապրինք :

Այս սակայն չեմք կարող ասել , թէ նորա և ս չունին իրաւունք , որք Ազգին վիճակը գոհացուցիչ յառաջադիմութիւն մէջ տեսնելով՝ ուրախաւութիւն փողեր կը հնչեցնեն . իրաւունք ունին , վասն զի շը կան այսօր անցելոյն աղէտալի իրողութիւններն . չը կան ամբովզ Հայ աղդը եւ Հոյսատանեաց Եկեղեցին տագնասող կրօնական տարապարտ վեճերն . թէեւ ցարդ այս վեճերուն արգասիքն եղող յունական ատելութիւնն իւր նոր նենդութեաններն կը շարունակէ . մերժ հայը իւր իրաւունքներէն կապաւել ջանալով , մերթ խժգաբար Հոյուն գագաղը բռնաբարելով , մերթ անտիք բրիստոնէական սգւով ընդհանուր բրիստոնէութեան միակպարձանն էղուն եղող ԽՍ. միայն հայուն կարծելով տոնակիսի առնելով և կոտրաւով և մերժ Հոյ Եկեղեցականին կը նախկին Եկեղեցական զգեսաններն քաշել պատառտելով . Չը կան այսօր այլ եւս մեզ համար այն արիւնաներկ գարերն , յորս կամ կայսերը Յաւնաց , կամ խայֆիայք Հագաւորուց բիւրոււոր հայեր կը գերելին և նոցա անմեղ և անպարտ արիւնը գեստիքէն կը հումքնեին . չը կան այլ եւս Պարսկական Յունական , Հագաւորական և կովիսաւընակ բարբարս աղդաց հալածակը .

ներն հարստահարութիւնքն , վրդով մունքներն , զիկան այս ամենը . այլ այս ամեն արհաւրանաց , այս ամեն աղետից աեղ ազատութիւն կը վայելեմք . փոխանակ այն արիւնայօծ գարերուն , ազատութեան , լուսաւորութեան , մէկ խօսքով յառաջադէմ և լուսաւորեալ ազդաց փառքը կազմող ժթդ գարուն մեջ կ'ապրինք . փոխանակ այն բարբարոս եւ արիւնկզակ բռնաւորներուն , բարեխնամ կայսեր մը հովանաւորութիւնը կը վայելեմք և փոխանակ կրօնական բռնաւորաւութեանց , ամենայն ազատութեամբ մեր կրօնական պաշտամներն ու պարտաւորութիւնքը կը կատարեմք : Իրու է որ այս ամենը ուրախական և միտքարական են , կը խառապինիմք զայս , ասկայն այլ է ուրախանալ այլ և յափշտակութը . փողեր հնչեցնելու չափ , կաքաւելու և ծափահորելու չափ ուրախական չեն . ինչպէս վերն նշանակուած տիրուր պատկերներն յուսահատեցնելու չափ ուրիշներ չեն :

Որ և իցել բան մի ճշգիւ գնուհատելու համար պէտք է իւր տեսակին եղաղներու հետ համեմատելով գնահատել . ապա թէ ոչ նորա յարդը կամ չոփէն աւելի նուազեցուցած կը լինիմք և կամ առատիկ բարձրացուցած . այսպէս եւս եմէ մեր Ազգի արդի վիճակին առանց ժամանակն և այլ պարագաներն ինկատ առնելու անցեալ կենաց հետ համեմատենք , բռն չափը չենք կարող գտնել . այլ շատերուն համար իսպառ անգոհացուցիչ և ուսանց համար եւս չափէն աւելի գոհացուցիչ . Մեք այս խօսքով ըսել չեմք ուզեր , թէ Ազգին վիճակից չունի արտասուաց արժանի կողմեր և կամ չունի ուրախական կշտեր . այլ ընդհակառակ կը մեր համազումն այն է , որ ով ոք կամի ազդի վերակենդանութեան ձեւ

որնառու լինիլ , ազգին վերքերը տեսած ժամանակ փոխանակ անցյա կոծելու , պէտք է մի կողմէն քննէ , զննէ և շաշափէ և միւս կողմէն ջանայ լուալ , դարմանել և ամեն կերպով ապաքինելու հոգ տանել , իսկ Ազգի արթնութիւնը կամ սմափումն աեսած ժամանակ առանց յափշտակուելու պէտք է ուրախանաց . վասն զի եթէ այդ ըսթափիումը , սցդ յառաջադիմական փոքրիկ խրստումը եթէ մեր անցեալ կենաց հետ , կամ եթէ զմեզ շրջապատկան պատկան այդ այլ կենաց հետ համեմատենք . խիստ փաքը և աննշան պիտի գտնեմք :

Յուսահատութիւնը թերահաւատութիւնն է . վասն զի յուսահատիլ Աստուծոյ նախախնամութիւնը ուրանալ կրնշանակէ . իսկ յառաջադիմական փոքրիկ ցցցի մը ծափահարութիւնը թեթեւամտութիւնն է և պարզապէս կուրութիւն , երկուսն եւս , այն է թէ յուսահատութիւնը և թէ թեթեւամտական փաղհարութիւնը կամ ծափահարութիւնը հաւասարապէս յառաջադիմութեան վեաասկար են . վասն զի ուր յուսահատութիւնը կը ափիէ , զի կայ այն տեղ գործունէութիւն , զի կայ աշխատութիւն , հետեւաբար եւ ոչ կենաց նորոգութիւն . ուր աննշան խրստում մի յափշտակութեամբ կը ծափահարուի և փաղհարութեամբ կը հռչակար , կը նշանակէ թէ զի այս . այն տեղ յառաջադիմութեան ճշմարիտ , զի կայ խորապնին աեսութիւն յառաջադիմակութիւնը իւր իսկ արժանեօք տեսնելու համար : Աւատի անկեղծ յառաջադիմականին , ճշմարիտ ազգասկիլին պարտաւորութիւնն է Ազգին թերաւթիւններն աեսած ժամանակ անցուահասա խոր զննել , նոցահետեւանկներն հեռաաեսել և ըստ այնմ գարման մատացանել . իսկ յուսաջադիմական փոքրիկ քայլը տեսած

ժամանակ պարտաւոր է առաւելքա-
ջակերել. անձամբ օրինակ գառնալ.
ոչ թէ շղոքորմել և շափողանց գո-
վեստներով և ջատագովութիւններով
պատրի:

Իսկ մեք թողով ոմանց յուսահատ
կոծը, ողբը և լալիւնը և ոմանց շափա-
զանց ուրախութիւնը կը խոստովանիմք.
որ Ազգը անցեցն մէջ, 73ին մեծ հա-
րուածներ և խոր վերքեր ընդունեց.
թէ պէտե այս խոստովանութիւնը ծանր
է զգայուն սրտերու համար, բայց ըս-
տցդ է և իրական, վասն զի վորչու-
թիւնը իւր հակասահմանադրական
ընթաց բով մի կողմէն, երեափախանու-
թիւնը իւր պատակտեալ դիրքով միւս
կողմէն Աղբին վերսաց շատ ծանրացան.
ընդհանուրին շահը և օգուար մասնա-
ւորաց հաճցից զոհուեցաւ, աղքի յա-
ռաջադիմութեան խնդիրը անձնական
կրից առջեւ խոնարհեցաւ. պատրի-
արքի հրաժարման խնդրոյն մէջ, որ օ-
տարանպատ նպատակներով յուղուե-
ցաւ, աղքային դաստիարակութեան և
վերսչնութեան վերաբերեալ խնդիր-
ները խորասուվեցան. յիմարաբար մաս-
նաւորաց խորդաւանութեամբ և նեն-
գութեամբ հայր հայուն դէմ զինե-
ցաւ. գործաւորը իւր գործը, բեռնա-
կիրը իւր բեռը և խանութպանը իւր
խանութը թող տալով ոմանց աղքա-
նենքներու ետեւէն գնացին և նոցա-
աղքակործան նպատակին ծառացեցին
մեքենայաբար, աղքային իշխանութիւ-
նը անարգեցաւ մի քանի պաշտօնա-
մղներու ծեռամբ . մէկը խիզճ ըրաւ-
առաջնորդական պաշտօն մի ձեռք բե-
րելու համար Մշեցին իւր համարիւն
Սամաթիացի եղաօր դէմ զինել, մի
քանիներն իրենց կուսակցութեան, ու
Ազգին, գործը յառաջ տանելու հա-
մար չը պատկառեցան և ոչ ստկացին
Եղեղեցւ մէջ, Ա. Պատարազին առ-

ջեւ ուամիկ ժողովուրդը գործիք շնե-
լով Աւետարանի պաշտօնեայն հալա-
ծել:

Պէտք է խոստավանիլ, որ Ազգին
այս դժբաղդ վայրկեաններուն, այս ար-
խուր ճգնաժամին մէջ աղքային օրագ-
րութիւնը եթէ ուղէր կարող էր ըստ
իւր կոչման, ըստ իւր նույիրական պար-
տաւորութեան, եթէ ոչ բոլորովին,
գոնէ մասամբ այս աղքատից առաջքն
առնուլ. բայց նա ընդհակառակն անձ
նասիրութեան ստրկանալով կողմնու-
պահ ոգւով առաւել կիրքերը բորբո-
քեց, յուղեց, պառակիտեց. մէկ խօս-
քով նա ինքն իւր բարձր կոշումն ուռ-
քի տակ առնելով պարագլուխ եղաւ
աղքը նենդ ողներուն:

Չեմք կարծեր, որ 73ին Ազգային
կենաց վերսաց բացած վերքերն շուտով
գոցուին վասն զի կեդրոնին մէջ ան-
պատիժ գործուած չարիքներն գաւա-
ռաց մէջ եւս իրենց հետեւանքներն
սիստի ունենան, որոյ առաջն օրինակը
Զմիւռին տուաւ, վասն զի աղքային
Պատրիարքարանի Յուլիս 31ին պատա-
հած գէպքը Օգոստոս 6ին Զմիւռնի-
ց մէջ կը կրկնուի. դաս մի խոռվա-
րաներ առաջնորդարան կը խուժեն.
խորհրդարանը կը կրպէն. եթէ Զմիւռ-
նից մէջ այսչափ, որ ամենէն լուսա-
ւորեալ քաղաքն համարուած է, հա-
պա ինչեր տեղի չը պիտի ունենան
վազու ուրիշ գաւառաց մէջ:

Ի՞նչ պէտք է առնել այսչափ աղե-
տից համար. լալ և կոծել անցյս. այս
լալ և կոծել, բայց ոչ անցյս. հետա-
զոտել թէ ինչ է սոցա պատճառը, և
կարելի եղածին շափ դարման տանիլ,
զննել և քննել թէ ինչ էր պատճառ
Ազգ. վարչութեան տարտամ և հակա-
սահմանադրական վիճակին. հետալո-
ւել թէ, երեսփոխանութիւնը պա-
ռակտուալ և շարժող հաղմելն ուստի